«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՈՒԴԻՏՈՐՆԵՐԻ ԵՎ ՓՈՐՁԱԳԵՏ ՀԱՇՎԱՊԱՀՆԵՐԻ ՊԱԼԱՏ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

30 օգոստոսի, 2022 թ. N 22 - Լ

ՈՐՈՇՈՒՄ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՈՒԴԻՏՈՐՆԵՐԻ ԵՎ ՓՈՐՁԱԳԵՏ ՀԱՇՎԱՊԱՀՆԵՐԻ ՊԱԼԱՏ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ԵՎ ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻ ԴԱՍԱԽՈՍՆԵՐԻ ԵՎ ԱՅԼ ԱՆՁԱՆՑ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Հայաստանի աուդիտորների և փորձագետ հաշվապահների պալատ» հասարակական կազմակերպության (այսուհետ՝ Պալատ) Կանոնադրության 14.16.3 կետը՝ Պալատի խորհուրդը որոշում է՝

1. Հաստատել «Հայաստանի աուդիտորների և փորձագետ հաշվապահների պալատ» հասարակական կազմակերպության որակավորման ծրագրի առարկաների և շարունակական մասնագիտական զարգացման դասընթացների դասախոսների և այլ անձանց վարձատրության կարգը՝ համաձայն կից հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Պալատի պաշտոնական կայքում հրապարակվելուց հետո և գործում է 2022թ.սեպտեմբերի 1-ից:

ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ **ԹԱԹՈՒԼ ՄՈՎՍԻՍՅԱՆ**

Հավելված

«Հայաստանի աուդիտորների և փորձագետ
հաշվապահների պալատ»
հասարակական կազմակերպության խորհրդի
2022 թ. օգոստոսի 30-ի N 22 - Լ որոշման

ԿԱՐԳ

Պալատի որակավորման ծրագրի և շարունակական մասնագիտական զարգացման դասընթացների դասախոսների և այլ անձանց վարձատրության

1. Ընդհանուր դրույթներ

1.1 Սույն կարգը կարգավորում է Պալատի որակավորման ծրագրի առարկաների և շարունակական մասնագիտական զարգացման դասընթացների դասախոսների և այլ անձանց վարձատրության չափը:

1.2 Պալատի որակավորման ծրագրի առարկաների և շարունակական մասնագիտական զարգացման դասընթացների մասնակիցների քանակը և լսարանային հնարավորությունները սահմանում է Պալատի գործադիր տնօրենը:

2. Պալատի որակավորման ծրագրի առարկաների դասընթացների վարձատրություն

2.1 Պալատի որակավորման ծրագրի առարկաների դասախոսները վարձատրվում են ամբողջական դրույքով դասընթացի մինչև 20 մասնակցի դեպքում: Որակավորման ծրագրի 1-3 առարկաների ամբողջական դրույքը կազմում է 620,000 դրամ, և 4-7 առարկաների համար՝ 670,000 դրամ: 20-ից ավել մասնակցի դեպքում դասախոսների վարձատրության ամբողջական դրույքը ավելանում է յուրաքանչյուր մասնակցի համար՝ 10,000 դրամով: ***(փոփոխ. 14.12.2023թ N 31-L խորհրդի որոշում, 07.02.2024թ. N 3-L խորհրդի որոշում)***

2.2 Պալատի որակավորման ծրագրի առարկաների քննաթերթ կազմողների վարձատրությունը որակավորման ծրագրի 1-3 առարկաների համար կազմում է 590,000 դրամ, և 4-7 առարկաների համար՝ 650,000 դրամ: ***(փոփոխ. 14.12.2023թ N 31-L խորհրդի որոշում, 07.02.2024թ. N 3-L խորհրդի որոշում)***

2.3 Պալատի որակավորման ծրագրի առարկաների քննաթերթ վերանայողների վարձատրությունը որակավորման ծրագրի 1-3 առարկաների համար կազմում է 200,000 դրամ, և 4-7 առարկաների համար՝ 250,000 դրամ: ***(փոփոխ. 14.12.2023թ N 31-L խորհրդի որոշում, 07.02.2024թ. N 3-L խորհրդի որոշում, 23.04.2026թ. N 7-L խորհրդի որոշում)***

2.4 Պալատի որակավորման ծրագրի առարկաների քննաթերթ ստուգողների և քննության արդյունքների վերանայողների վարձատրությունը որակավորման ծրագրի 1-3 առարկաների յուրաքանչյուր քննաթերթի համար կազմում է 6000 դրամ, և 4-7 առարկաների համար՝ 7000 դրամ: ***(փոփոխ. 22.09.2023թ N 21-L խորհրդի որոշում, փոփոխ. 25.12.2024թ N 41-L որոշում)***

3. Պալատի շարունակական մասնագիտական զարգացման դասընթացների վարձատրություն

3.1 Պալատի շարունակական մասնագիտական զարգացման դասընթացների դասախոսը դասընթացի մինչև 20 մասնակցի դեպքում վարձատրվում է 1 ժամը 20,000 ՀՀ դրամով: 20-ից մինչև 50 մասնակցի դեպքում դասախոսի վարձատրության 1 ժամի արժեքը յուրաքանչյուր մասնակցի համար ավելանում է 1,000 ՀՀ դրամով: 50-ից ավելի մասնակցի դեպքում դասախոսի վարձատրության 1 ժամի արժեքը յուրաքանչյուր մասնակցի համար ավելանում է 500 ՀՀ դրամով: Վարձատրության ընդհանուր գումարը յուրաքանչյուր ժամի համար չպետք է գերազանցի 100,000 ՀՀ դրամը: ***(փոփոխ. 22.09.2023թ N 21-L խորհրդի որոշում)***